

Ա. ԿՈՅՈՂՅԱՆ

ՄԵԴՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԵԴՎԱԲԵՐԲԻ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ
ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՅ ԴՆԵՍՆԻՍ

2 коп.

СЛОВ

МЕТРИЧЕСКОЕ

Меры или линейные

Километр (км) = 1000 метров (м)

Метр (м) = 10 дм = 100 сантиметров (см)

Дециметр (дм) = 10 сантиметров (см)

Сантиметр (см) = 10 миллиметров (мм)

Площади

Квадратный километр (кв. км) = 1000000 квадратных метров (кв. м)

Квадратный метр (кв. м) = 100 квадратных дециметров = 10000 квадратных сантиметров

Гектар (га) = 100 ар (а) = 10000 квадратных метров (кв. м)

Ар (а) = 100 квадратных метров (кв. м)

1 метр
1 сантиметр
1 литр
1 гектолитр

Меры веса

1 тонна (т)
1 центнер
1 килограмм
1 грамм (г)

ТАБЛИЦА УМНОЖЕНИЯ

633.132
4-64

Ս. ԿՈՐՈՂՅԱՆ

ՍՏՈՒԳԱՍՏ Է 1967 թ.

ՄԵՂՎԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԵՂՐԱՐԵՐԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ՁԵՌՆԱՐԿ

A 2855
5406



Z U B M E S Z R U S
ԵՐԵՎԱՆ 1948

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Մեղվաբուծությունը, որպես մանր անասնապահության նյութերից մեկը, խոշոր նշանակություն ունի մեր ժողովրդական տնտեսության համար: Նա իր բարձր եկամտաբերությամբ օժանդակում է կուլեկտիվ տնտեսությունների ամրապնդմանը, բարելավում է ունեվոր է դարձնում կուլտեսակաձևների տնտեսություններն ու նրանց դարձնում բարեկեցիկ ու կուլտուրական:

Մեղվաբուծությունը բացի մեղրից, որը հանդիսանում է բարձրարժեք սննդանյութ մարդկանց համար, տալիս է նաև մոմ, որն օգտագործվում է մեր արդյունաբերության 40 նյութերում: Սակայն մեղվաբուծության նշանակությունը միայն դրանով չի սահմանափակվում, նրա նշանակությունը մեծ է նաև խոտաբույսերի, պտղատու ծառերի, բանջարեղենների և դեղաբույսերի բերքատվության բարձրացման գործում օրինակ, մեղուների միջոցով առվույսի սերմակալումը բարձրանում է 40—50%-ով, կարմիր երեխնուկինը՝ 300%-ով, արևածաղկինը՝ 30%-ով, խնձորենունը՝ 60%-ով և այլը:

Մեր կառավարությունը հազվի առնելով մեղվաբուծության խոշոր դերը, մի շարք որոշումների նեւ միասին, կատակ արտոնություններ է սվել մեղվաբուծական տնտեսություններին:

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՇԱՆՁՆԵՐԸ

Մեղուներն ապրում են ընտանիքներով, նրանց ընտանիքը բաղկացած է 3 տիպի մեղուներից՝ մայր, աշխատավոր մեղու և բու (տես նկ. № 1)։ Սրանք ապրում և աշխատում են միասին, սրպես մի ընտա-



Մայր



Նկար № 1.
Աշխատավոր մեղու



Բու

Նիք։ Մեղուն վերցրած սրպես անհատ, ոչ մի նշանակալի չունի, նա ինքնուրույն ապրել և օգուտ առլ չի կարող։

Մեղվի նորմալ ընտանիքն ունենում է մեկ մայր, որն ընտանիքում կատարում է միմիայն լադմացման աշխատանք, այսինքն ածում է ձվեր: Մայրը կարող է ապրել 3—5 տարի, բայց նրա ձվարկության ամենաառատ շրջանն առաջին և երկրորդ տարիներն են. դրա համար էլ առաջարկվում է մեղվի նորմալ ընտանիքում մայրը 2 տարուց ավելի չօգտագործել (բացառությամբ ռեկորդային մայրերից):

Մեղվի ընտանիքում լինում են 10—60 հազար աշխատավոր մեղուներ (նայած տարվա ժամանակին), որոնք զբաղվում են մայր մեղվի դրած ձվերին խնամելով, դաշտից նեկտար, ծաղկափոշի, ջուր բերելով, մոմ արտադրելով և փեթակի ներսում դառնալան աշխատանքներ կատարելով:

Աշխատավոր մեղվի կյանքը շատ կարճ է: Նա դարձնան և ամռան ամիսներին ապրում է 30—90 օր, նայած աշխատանքի ծանրությանը: Փեթակում աշխատավոր մեղուները հիմնականում բաժանվում են երկու խմբի. 1—15 օրական մեղուները փեթակի ներսում զբաղվում են սրղերին կերակրելով, խնամելով, նեկտարը մեղրի վերափոխելով, մոմ արտադրելով, չեչ գործելով, փեթակի ներսում մաքրություն պահպանելով և այլն:

Մյուս խումբը 15 օրականից բարձր աշխատավոր մեղուներն են, որոնք զբաղվում են դաշտային աշխա-

տանքներով, նրանք դաշտից բերում են նեկտար,
ծաղկափուշի և ջուր:

Մեղվի ընտանիքներում տարվա որոշ ժամանա-
կամիջոցում հայտնվում են մի քանի հարյուրյակ բո-
ւեր (արուներ), որոնք ընտանիքներում կատարում են
միմիայն մի օգտակար աշխատանք, այդ երիտասարդ
մայրերին բեղմնավորելն է, որը խոշոր նշանակու-
թյուն ունի մեղվի ընտանիքների բերքաբարձրացման
գործում: Բոուերի կյանքը շատ կարճ է, որովհետև
նորմալ ընտանիքներում գլխավոր մեղրաբերքը վեր-
ջամալուց անմիջապես հետո աշխատավոր մեղուները
բոուերին ամբողջությամբ ոչնչացնում են:

Աշնանը և ձմռանը բոուեր լինում են միմիայն
աննորմալ ընտանիքներում, այսինքն այն ընտանիք-
ներում, որտեղ չկա մայր կամ թե չէ ընտանիքն ունի
չբեղմնավորված մայր:

Մեղվի ընտանիքների աճեցման և բազմացման
համար գարնանն անհրաժեշտ է ապահովել նրանց
հետևյալ կենսական պահանջները.

Մեղվի ընտանիքում, ինչպես մենք վերևում ա-
սացինք, լինում է միայն մեկ մայր և նրա օրական
ձվարկության միջին քանակը սեղոնի ընթացքում
հասնում է 900—1200 ձվի. դրա համար պետք է աշ-
խատել ընտանիքներում պահել երիտասարդ և ձվա-
ռատ մայրեր, որովհետև մեղվի ընտանիքների բազ-

մացման ընթացքը կախված է մայր մեղվի ածած ձվերի քանակից: Որպեսզի մայր մեղվի դրած ձվերից դուրս գան մեղուներ, անհրաժեշտ է, որ ընտանիքում դրանց խնամելու և կերակրելու համար լինեն անհրաժեշտ քանակությամբ կերակրող մեղուներ:

Մայր մեղվի դրած ձվերը բջիջներում 3 օրից հետո դառնում են թրթուրներ (բաց որդեր) և այդ վիճակում մնում են 6 օր. ահա այդ ժամանակամիջոցում նրանց անհրաժեշտ է մեծ քանակությամբ կեր և լավ խնամք: Ձուլ դնելու օրից հաշված՝ 9-րդ օրը թրթուրները ձևափոխվում են հարսնյակների (կնքված որդեր), որոնք 12 օր փակված վիճակում մնալով բջիջների մեջ դուրս են գալիս որպես աշխատավոր մեղուներ: Այդ 12 օրվա ընթացքում բացի համապատասխան ջերմությունից ($34-35^{\circ}$ Ց-ի) հարսնյակներին ուրիշ ոչ մի խնամք հարկավոր չէ: Ուրեմն աշխատավոր մեղվի սաղմերը, սկսած մայր մեղվի ձուլ դնելու օրից, 9 օր մնում են բջիջների մեջ բաց վիճակում, իսկ 12 օր, փակ հարսնյակ վիճակում: Այսպիսով եթե հաշվելու լինենք ընտանիքում բաց որդերի ու ձվերի քանակը 9 օրվա ընթացքում կարող է հասնել մինչև 14000—18000-ի, որոնց ամբողջ կերակրման և խնամքի աշխատանքները տանում են ջահել խնամող և կերակրող մեղուները: Խնամող մեղուների մեջ որդերի խնամելու ընդունա-

կուլթյունը շատ ուժեղ է. մի մեղուն միաժամանակ
կարող է կերակրել 3—4 որդ, հետևաբար մեկ մոր
դրած որդերին ու ձվերին լրիվ խնամելու համար
անհրաժեշտ է, որ ընտանիքն ունենա 8000—10000
մեղու, որոնցից մոտ 4000—5000—ը կլինեն խնամող
ու կերակրող մեղուներ, իսկ մնացածները կազմում
են 15 օրականից բարձր աշխատավոր մեղուներ, ո-
րոնք կատարում են դրախ աշխատանք: Ուրեմն մեղվի
նորմալ ընտանիքները պետք է ունենան նաև համա-
պատասխան քանակությամբ աշխատավոր մեղուներ,
որոնք ապահովեն մոր դրած ձվերի լրիվ խնամքը և
կատարեն դրախ աշխատանքը, որպեսզի ընտանիքների
բազմացման ընթացքը չդանդաղի:

Մեղվի ընտանիքների աճեցման ու բազմացման
համար անհրաժեշտ է նաև ջերմություն, ընտանիքի
բնում պետք է լինի 34—35° ջերմություն, որպեսզի
մեղուները ծավալվեն և մայրն իր ձվարկությունն
ընդլայնի: Մեղվի ընտանիքներում եղած ջերմությու-
նը պահպանելու համար ընտանիքներում եղած բոլոր
ավելորդ չեչերը պետք է հանել, բները դասավորել
փեթակների կենտրոնում (և) երկու կողքերից և վրայից
դնել դարմանով տաքացումներ: Բների այսպիսի դա-
սավորումն օժանդակում է ընտանիքների աճեցմանը,
այսինքն բարձրացնում է ընտանիքների բազմացման
տեմպը՝ թույլ ընտանիքներում 80%-ով, միջակ ըն-

տանիքներում 50%—ով իսկ ուժեղ ընտանիքներում 20%—ով:

Մեղվի ընտանիքների կենսական պահանջներից մեկն էլ հանդիսանում է կերը (մեղր և ծաղկափուշի): Նրանց արագ բաղմացման համար անհրաժեշտ է որ նրանք դարնանը լրիվ չափով ապահովված լինեն՝ կերապաշարով, որովհետև կերով ապահովված ընտանիքները, անբարենպաստ եղանակներին և թույլ բերքի ժամանակ 77%—ով ավելի շատ նեկտար և ծաղկափուշի կհավաքեն քան թե պաշարադուրկ ընտանիքները:

Մեղվի ընտանիքը պետք է լինի ուժեղ, այսինքն պետք է ունենա 1,2—1,8 կգ. մեղու և 10—12 կգ. կեր, որպեսզի հնարավորութուն ունենա մաքսիմալ չափով աճելու, բաղմանալու և գլխավոր մեղրաբերքը լրիվ չափով օգտագործելու: Մեղվի ընտանիքները պետք է պահել չոր, քամու հոսանքներից ապահով վայրերում, ճահճոտ վայրերից, խոշոր գետերից և լճերից հեռու:

Չմեռանոցների շենքում պետք է լինի կայուն ջերմաստիճան՝ 4—6° տատանումներով: Չմեռանոցը պետք է ունենա նաև օդափոխության հարմարանքներ, որպեսզի հնարավոր լինի ձմռանը մեղուներին մատակարարել թարմ օդ, և բացի այդ, օդանցքների միջոցով կարգավորել ջերմաստիճանի ուժեղ տատանում-

ները: Չմեռանոցներն շենքերը պետք է լինեն չոր,
գետերից, լճերից, դժխավոր ճանապարհներից և խո-
շոր գործարաններից հեռու: Ահա այն հիմնական
պայմանները, որոնք անհրաժեշտ են մեղվի ընտա-
նիքների անխափան աճեցման և բազմացման համար:

Մեղվաբուծությունից բարձր եկամուտ կարելի է
ստանալ միմիայն առաջավոր տեխնիկայի և լավա-
գույն խնամքի դեպքում:

Մեղվի ընտանիքների արտադրողականության
բարձրացման գործում խոշոր նշանակութուն ունի
նրանց նորմալ խնամքը: Վատ խնամքի դեպքում
կդանդաղի մեղվի ընտանիքների բազմացման տեմ-
պը, որի պատճառով ընտանիքը կմնա թույլ և դժխա-
վոր մեղրաբերքի ժամանակ նրանց արտադրողակա-
նությունը կլինի շատ ցածր: Առհասարակ բոլոր
պայմաններում լավ արդյունքների ստացվում են այն
օրեկաններից, որոնց նկատմամբ տարվել է լավ խնամք
և կիրառվել է մեղվաբուծության գոկանոններ:

ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԶՈՈԿԱՆՈՆՆԵՐ

Յուրաքանչյուր մեղվաբուծական տնտեսություն
պետք է իր մեղվանոցում կիրառի ներքոհիշյալ գո-
կանոնները:

1. Չմռան վերջին և դարնան սկզբին, երբ մե-

դուռները դեռ ձմեռանոցումն են, պետք է ուժեղ հըս-
կողություն սահմանել և օդադործել ձմեռանոցի
համար դեռ աշնանից սարքավորված օդափոխության
բոլոր հնարավորությունները:

2. Նախքան մեղուները ձմեռանոցից դուրս դնե-
լը, պետք է ընտրել և մաքրել մեղվանոցի տեղը:
Մեղվանոցի տեղը պետք է լինի չոր, պաշտպանված
քամիներից ու աղմուկից, հեռու ջրերից, գետերից,
ճանապարհներից, ճահիճներից, և պաշտպանված
երկարատև շոգերից:

3. Մեղուները ձմեռանոցից դուրս պետք է դնել,
երբ դրսում այլևս ձյուն չկա և ջերմաստիճանն
ստիճերում հասնում է 10—13 աստիճանի (ըստ Յել-
սիուսի): Դուրս դնելու աշխատանքը պետք է կատա-
րել լավ եղանակին և առավոտյան վաղ մինչև ցերեկ-
վա ժամը 11—12-ը:

4. Այս կանոնից կարելի է բացառություն կադ-
մել և մեղուները ձմեռանոցից դուրս դնել միայն այն
դեպքում, երբ օդափոխության բոլոր միջոցները
դորձադրելուց հետո ձմեռանոցում մեղուները դարձ-
յալ անհանդիստ են և ջերմաստիճանը $+ 6^{\circ}$ -ից ար-
դեն բարձրացել է:

5. Դուրս դնելուց և մաքրման թռիչքից հետո
մեղվանոցում պետք է կատարել ընտանիքների ար-

տաքին թուղիկ ստուգում, պարզելու նրանց վիճակը:

Այն է՝ ընտանիքներից հանգածներ կան թե ոչ, պաշար և մայր ունեն թե ոչ, և այդպիսիներ լինելու դեպքում ցույց տալ առաջին օգնությունը:

6. Մաքրման թնիչքից 1—2 օր հետո պետք է մաքրել փեթակներ խոտակները, հանել ավելորդ շրջանակները, որոնց վրա մեղու չկա, քերել և հավաքել փեթակում եղած մոմը, բունը սեղմել կենտրոնում և երկու կողմից տալ տաքացումներ:

7. Հատակները մաքրելու աշխատանքները վերջացնելուց հետո, օրվա տաք եղանակին, պետք է կատարել ընտանիքների առաջին, գլխավոր ստուգումը:

Հայտնաբերված անմայր ընտանիքներին պետք է տալ պահեստի մայրեր, իսկ մայր չլինելու դեպքում միացնել մայր ունեցող ընտանիքներից մեկի հետ:

8. Կերասպակաս ընտանիքների պաշարի լրացումը պետք է կատարել շրջանակով կնքված մեղրով կամ թանձր չաքարաջրով, (երկու բաժին չաքար, մեկ բաժին ջուր, այն էլ մեծ բաժիններով 800—1500 գրամ մեկ անգամից):

9. Ջրից հեռու մեղվանոցներում պետք է դնել ջրամաններ:

10. Ամբողջ սեղոնի ընթացքում պետք է պայքարել մեղուների դողուլթյան դեմ:

11. Մեղվանոցում պետք է պարբերաբար հսկողություն ունենալ և կարիքի դեպքում ընտանիքի բուները համապատասխան չափով լայնացնելու ու լրացուցիչ չեչեր տալու համար:

12. Ձեռն անմիջապես բնի կենտրոնում տալ չի թույլատրվում: Երեք տարուց ավելի գործածված (հին, սևացած) չեչերը բնում չպետք է գործածել:

13. Անկանոն և բուռն չեչերից խուսափելու նպատակով մոմաթերթերը փակցնել անպայման մետաղալարված շրջանակների վրա:

14. Մեղվանոցում չպահել երկու տարեկանից բարձր հասակ ունեցող մայրեր, բացի ուկրդային մայրերից:

15. Պայքարել ձաղատենդի և բնական ձաղատվության դեմ, միմիայն թափ տալու միջոցով:

16. Մեղվի ընտանիքների բազմացումը կատարել արհեստական ձաղ վերցնելու միջոցով: Ձաղ վերցնել մեղրարերքից 30—50 օր առաջ:

17. Արհեստական մայրաբուծության աշխատանքները ձեռնարկել այն հաշվով, որ մեղրարերքից 30—50 օր առաջ հնարավոր լինի ունենալ բեղմնավորված մայրեր:

18. Մեղվանոցային դույզը պետք է կանոնավոր

դասավորել մեղվանոցին կից հասուել չենքերում, որ-
տեղ մեղուները չեն կարող մուտք դործել:

19. Մեղրը քամել մեղուներին անմատչելի հա-
սուել կամ հարմարեցված չենքերում:

20. Մեղվանոցում պետք է ունենալ՝
ա. մեղվանոցային տետր և նրանում դրանցել
յուրաքանչյուր ընտանիքին վերաբերող դիտողու-
թյունները:

բ. տասնորդական կշեռք և նրա վրա դնել մեղ-
վանոցի սովորական ուժի և լավ որակի ընտանիքնե-
րից մեկը:

գ. արևի մոմհալ, մոմի կտորները և քերված
մոմերը հավաքելու և հալելու համար:

դ. դիտողությունների տետր կամ օրագիր օդի
փոփոխությունները և կշռափեթակի վերաբերյալ
տեղեկությունները գրանցելու համար:

21. Մեղվանոցի յուրաքանչյուր ընտանիք պետք
է առնվազն 14 չեչով ապահովված լինի:

22. Չեչերը ցեցից պաշտպանելու համար պետք է
նախապես նրանք դասավորել կորպուսների մեջ, վը-
րան ցանել նաֆթալին, կորպուսները դարսել մեկը
մեկի վրա սյունաձև և անցքերը փակել մկներից
պաշտպանելու համար:

23. Լեռնային և նախալեռնային շրջաններում
մեղվի բոլոր ընտանիքներն աշնանը (սեպտեմբեր և

հոկտեմբերի ամիսներին) պետք է ունենան առնվազն 7 շրջանակ (1400 գ.) մեղու և 16—18 կգ. մեղրի պաշար, իսկ դաշտային շրջաններում առնվազն 6 շրջանակ (1200 գ.) մեղու և 14—16 կգ. մեղրի պաշար: Ձմեռանոցից դուրս դնելուց հետո, գարնան գլխավոր ստուգման ժամանակ, լեռնային և նախալեռնային շրջաններում մեղվի բոլոր ընտանիքները պետք է ունենան առնվազն 6 շրջանակ (1200 գ.) մեղու և 12 կգ. մեղրի պաշար, իսկ դաշտային շրջաններում առնվազն 5-շրջանակ (1000 գ.) մեղու և 10-կգ. պաշար:

24. Որպես անձեռնմխելի ֆոնդ մեղվանոցը ձմեռանոց դնացող յուրաքանչյուր ընտանիքի համար պետք է պահի մեկից երկու շրջանակ լիքը կնքված մեղր:

25. Յուրաքանչյուր մեղվանոց ձմեռանոց պետք է դնի ձմեռող ընտանիքների քանակի առնվազն 10-տոկոսի չափով հուկլեռաներ պահեստի մայրերով:

26. Մեղուները ձմեռանոց դնելուց առաջ փեթակներից պետք է վերցնել այն բոլոր շրջանակները, որոնց վրա մեղու չկա և ապա կատարել տաքացումներ լրացում:

27. Դրսում ձմեռող ընտանիքները պետք է սարքավորված լինեն անհամեմատ ավելի լավ տաքացումներով:

28. Այն շենքերը, որտեղ ձմեռելու են մեղուները, նախապես պետք է հարմարեցնել ձմեռանոցի նորմալ պահանջներին: Շենքը պետք է լինի բացարձակապես մութ, չոր, աղմուկից հեռու, տանիքը սվաղած, օդափոխությունը հարմարեցված, ներսը մաքրված և հարեան շենքերի ծխից պաշտպանված:

Ձմեռանոցում պետք է պահպանել 4—6° ջերմություն (ըստ C-ի) որից բարձր կամ ցածր լինելու դեպքում կարգավորել օդափոխությունն անցքերի բացելով կամ փակելով: Ձմեռանոցում վառարան կամ կերոսինիկա վառելը չի թույլատրվում:

29. Մեղուները ձմեռանոցում պետք է դարսել աշնապես, որ հնարավոր լինի շարքերի արանքով անցնել, և մեղուների ձմեռվա հանգիստը ստուգել ըստ առանձին-առանձին ընտանիքների:

ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԶՈՈՎԵՏԿԱՆՈՆՆԵՐ

Մեղվաբուծության նորմալ դարգացմանը խոշոր արգելք են հանդիսանում հիվանդությունները, որոնք փչացնում են մեղուների սրգերը, թուլացնում և չափազանցում հանգցնում մեծ թվով ընտանիքներ, հսկայական վնաս պատճառելով սոցիալիստական մեղվաբուծությանը: Մեղվի հիվանդությունների դեմ կադմակերպված ձևով պայքար տանելու և հնարավոր

չամփոփ վարակուժը կանխելու նպատակով անհրա-
ժեշտ է բոլոր մեղվանոցներում գործադրել ստորև
բերված զոռվեականոնները:

1. Մեղվանոցներում և նրա շրջապատում բա-
ցոթյա չթողնել ոչ մի իր՝ (դատարկ փեթակ, շրջա-
նակներ, դանակ, քերիչ, մոմի մնացորդներ և այլն):

2. Ախտահանել մեղվանոցային բոլոր շենքերը
(ձմեռանոցներ, պահեստ, աշխատանոց, բուդկաներ
և այլն) թե գարնանը և թե աշնանը:

3. Առանց մաքուր խալաթի մեղվանոց չմտնել,
իսկ մեղվանոցային աշխատանքից դուրս նույն խա-
լաթով ման չգալ:

4. Մեղվանոցում անպայման ունենալ լվացարան,
օճառ, սրբիչ և ախտահանիչ նյութեր (սուլեմայի
լուծույթ 0,001 % և ֆորմալինի լուծույթ 30-տո-
կոսանոց) .

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ— Սուլեմայի և ֆորմա-
լինի լուծույթների գործածության ժամանակ
զգույշ լինել և այդպիսիները պահել հատուկ
պահարաններում:

5. Որքան հնարավոր է մեղվանոցում չունենալ և
չպահել մեղուների թույլ ընտանիքներ:

6. Եթե կան թույլ ընտանիքներ, գարնան և աշ-
նան ժամանակաշրջանում, երբ բերքը բացակայում

է, փոքրացնել նրանց արկանոցը և միշտ հսկել, որ հարձակումների չենթարկվեն:

7. Մի փեթակից մի այլ փեթակ մեղուներ, շրջանակներով որդ, մեղր կամ շրջանակ չտեղափոխել, առանց նախապես վատահ լինելու, որ այն ընտանիքը, որտեղից վերցվում է, կամ որտեղ կատարվելու է փոխադրումը դերժ է հիվանդություններից:


8. Մեղուներին չկերակրել այլ տեղերից բերած մեղրով:

9. Մեղուներին ծոր մեղրով կերակրելիս մեղրին խառնել հավասար քանակությամբ ջուր, եռացնել առնվազն 40—50 րոպե և նոր միայն տալ մեղուներին:

10. Տարբեր տեղերից ձեռք բերված, դործածված հին փեթակներ, շրջանակներ, դործիքներ և այլն, չօգտագործել առանց նախապես մաքրելու և ախտահանելու:

11. Չդնել և չվաճառել մեղուների հիվանդ ընտանիքներ կամ նրանցից հենց նոր ստացված բնական կամ արհեստական ձագեր:

12. Հիվանդ ընտանիքներից բնական ձագ ստացվելու դեպքում այդպիսին տեղավորել միմիայն մոմաթերթով շրջանակներ ունեցող մաքուր փեթակի մեջ: Հիվանդ ընտանիքներից արհեստական ձագ չվերցնել:



13. Մոմաթերթ գնելիս նախապատվություն տալ միայն պետական արհեստանոցներում պատրաստված մոմաթերթին և խուսափել պրիմիտիվ ձևով պատրաստվածներից:

14. Տարբեր մեղվանոցներից ստացված մայրերը փոխադրել մաքուր մայրամիջանդակի մեջ և հետո տարնամանիքներին, նրանց հետ եկած մայրամիջանդակներն ախտահանել և մեղուներն ու պաշարը, եթե կան, անպայման ոչնչացնել:

15. Խուսափել կնքված բուսաբջիջները կտրտելուց և գետին թափելուց:

16. Միշտ հետևել մեղուների ընտանիքների ընդհանուր դրուժյանը, վաղօրոք հայտնաբերել հիվանդ ընտանիքները և որոշել հիվանդուժյան տեսակը:

17. Հիվանդ ընտանիքներ հայտնաբերելիս առանձին ուշադրություն դարձնել, որպեսզի նրանք հարձակումների չենթարկվեն:

18. Որքան հնարավոր է շուտ բուժման ենթարկել փտախտով բոլոր հիվանդ ընտանիքները, առանց հիվանդուժյան տեսակը նկատի ունենալու:

19. Բուժումը կատարել միայն թափ տալու միջոցով: Թափ տված ընտանիքներն առնվազը 48 ժամ դատարկ շրջանակների (և ոչ թե չեչերով կամ մոմաթերթով շրջանակների) վրա պահելուց հետո միայն փոխադրել նոր կամ ախտահանված փեթակի

մեջ, մոմաթերթով մաքուր շրջանակների վրա, կիրառելով հիվանդությունների դեմ պայքարելու հրահանգում նախատեսված բոլոր կետերը:

20. Նախքան բուժման աշխատանքներին անցնելը կատարել նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ, բուժման գործողությունը որքան հնարավոր է հեշտացնելու և գործողության ժամանակը կրճատելու նպատակով:

21. Թափ տալու գործողությունն առհասարակ կատարել ճաշից հետո, երբ մեղուների մասսայական թռիչքը դադարում է:

22. Հիվանդ ընտանիքների հետ աշխատելիս խիստ զգույշ լինել, որպեսզի վարակված մեղրով կամ հիվանդ որդերով լիքը շրջանակները ոչ մի բույսի քսիչ չմնան և այլ մեղուների հարձակման չենթարկվեն:

23. Հիվանդ ընտանիքների հետ աշխատելուց հետո ձեռքերը և գործիքներն անպայման լվանալ և ախտահանել, հազնել մաքուր խալաթ նախքան այլ առողջ ընտանիքների ձեռք տալը:

24. Հիվանդ ընտանիքներ թափ տալուց հետո նրանցից վերցրած որդով շրջանակներն անմիջապես պետք է տեղափոխել թույլ և հիվանդ ընտանիքներում, իսկ մեղրով շրջանակները և փեթակն իր սար-

քանի որ ումով անմիջապես մեղմանոցից հեռացնել համապատասխան փակ տեղ, փեթակները և նրա մասերըն ախտահանել, մեղքը քամել և չեչեքը հանել:

25. Փեթակները և նրա մասերը լրիվ ախտահանելու համար անպայման նախապես հիմնականորեն քերել եղած մոմն ու ակնամոմը, հատակն անջատել արկղից և հետո ախտահանել (խանձել) պայազնի լամպով:

Կողքի տոպրակներն ու վրայի շորերը, եթե նրանք նոր են, պետք է ախտահանել առնվազն մեկ ժամ հեռացնելով, իսկ հներն այրել:

26. Ակարողով կամ Նոզեմատողով հիվանդ ընտանիքները ժամանակին հայտարարելու և ճիշտ դիտադնող տալու համար անհրաժեշտ է վաղ դարնանը երբ մեղուները ձմեռանոցից դուրս են դնում, հատակները մաքրելու ժամանակ ամեն մի կասկածելի ընտանիքից (որոնք որ ձմեռանոցում մեծ քանակությամբ անկում են տվել) առանձին առանձին վերցնել 30—50 հատ սատկած մեղուներ և տեղավորել լուցկու տուփերի կամ թղթից ծրարների մեջ վրաները դրել ընտանիքի համարը և ուղարկել համապատասխան վետ. լաբորատորիաները հիվանդության տեսակը պարզելու համար:

27. Ակարողով և Նոզեմատողով հիվանդ ընտանիքներից բնական կամ արհեստական ձագեր չվերց-

նել, բացի դա մեղուներով ուժ չալ մի ընտանիքից մյուս ընտանիքին, թույլ ընտանիքներին ուժեղացնելու նպատակով:

28. Նողեմատողով հիվանդ ընտանիքների մայրերին աչնանը պետք է փոխել, որովհետև մեղվի ընտանիքում վարակիչ աղբյուրը հանդիսանում է մայրը:

29. Ակարողով հիվանդ ընտանիքների ընթացումը կատարել, համաձայն հրահանգի, շրջանային վետ. պերսոնալի օժանդակությամբ և ցուցումներով:

Մեղուների փտախտ հիվանդություններն իրարից տարբերելու համար նայել վերջում կցված համապատասխան տախտակին:

Մեզ մշակած մեք-դի հիմնական առավելությունը մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման գործում կայանում է նրանում, որ մենք լայնամիջի և մի շարք նոր միջոցառումների շնորհիվ մեղվի ընտանիքների համար ստեղծում ենք դարձացման ու բազմացման լիակատար բարենպաստ պայմաններ, որի շնորհիվ աշխատավոր մեղուների քանակն ընտանիքներում վեցասպասկվում, յոթնասպասկվում է և դրա շնորհիվ էլ բարձրանում է մեղվի ընտանիքների ընդհանուր արտադրողականությունը:

1939 թ. Հայկական ռեսպուբլիկական անասնա-


սլահակաճն փորձակայանը մշակեց մեղվի ընտանիքներին արտադրողականության բարձրացման նոր մեթոդ, կիրառելով մի շարք կոմպլեքս միջոցառումներ. դրանք են մեղվի ընտանիքների բների միջըջանակային տարածության փոքրացումը, բների ներսից եռացրած ջրով արհեստական տաքացումներ դնելը, մաքսիմալ քանակությամբ օժանդակ մայրեր օգտագործելը և քոչվորության ռացիոնալ կադմակերպումը, որոնց շնորհիվ բարձրանում է մեղվի ընտանիքների ընդհանուր արտադրողականությունը:

Առաջին միջոցառման (այն է բների միջըջանակային տարածության փոքրացում) էությունը կայանում է նրանում, որ վաղ դարձանը կարողանանք մեղվի ընտանիքներում եղած մեղվային դանգվածը մաքսիմալ չափով նպաստակահարմար օգտագործել. դրա համար անհրաժեշտ է մեղուները ձմեռանոցից դուրս դնելուց անմիջապես հետո փոքրացնել մեղվի ընտանիքների միջըջանակային տարածությունը, այսինքն բնի շրջանակները դնել մեկը մյուսից 8,5 միլիմետր հեռավորության վրա (նախկին 13 միլիմետր հեռավորության փոխարեն), այն հաշվով, որ Դադան-Քլատի կամ Լանդստրոտի 12 շրջանականոց փեթակներում տեղավորվի 13 շրջանակ (տես նկ. № 2):


Միջըջանակային տարածության փոքրացման էֆեկտիվությունը կայանում է նրանում, որ վաղ



2



1



Նկար № 2.

Հին և նոր բաժանաբաններ

դարնանը, երբ ընտանիքը պատոււ է ենթադրենք
 5 շրջանակ մեղու, մայրը կսկսի ձվել 3 շրջանակներ
 վրա, այն էլ ոչ լրիւ, իսկ միջշրջանակային տարած-
 ծությունը փոքրացնելուց հետո, մեղուները կպատեն
 6 շրջանակ, իսկ մայրն իր ձվարկության սահմաննե-
 րը կտարածի նաև 4-րդ շրջանակի վրա: Այսպիսով,
 ընտանիքի միջշրջանակային տարածության փոքրաց-
 ման հետևանքով ավելի հեշտ կլինի մեղուներին ըն-
 տանիքում պահպանել տաքությունը, որի հետևան-
 քով մեղվի ընտանիքների զարգացման ընթացքն այս
 դեպքում կարողանա մոտ 25 %-ով:


Երկրորդ միջոցառման էությունը կայանում է նրանում, որ վաղ դարձանք մեղվի ընտանիքների դարգացման համար կարողանանք ստեղծել ջերմային բարենպաստ պայմաններ: Ընդհանրապես դարձան գիշերներն, երբեմն նույնիսկ ցերեկները, շատ ցուրտ է լինում, դրա պատճառով մեղվի ընտանիքները կծիկ են կաղմում և չեն տարածվում, մայրերն իրենց ձվարկություն սահմանը չեն ընդլայնում, դրա հետևանքով էլ մեղվի ընտանիքների դարգացումը շատ դանդաղ է ընթանում: Գարնան ամիսներին մեղվի ընտանիքների դարգացման ընթացքն արագացնելու համար, մեղուները ձմեռանույից դուրս դնելուց 6—8 օր հետո, նախած կլիմայական պայմաններին, անհրաժեշտ է մեղվի փեթակների ներսից դնել արհեստական տաքացումներ: Տաքացումները պետք է դնել այդ նպատակի համար պատրաստված թիթեղյա հատուկ աղարատների միջոցով: Աղարատի չափերն են՝ լայնությունը 2,5 սմ. երկարությունը 38 սմ. բարձրությունը 27 սմ. (Լանդստրոտի դեպքում բարձրությունը 23 սմ.), տես նկ. № 3:

Այս աղարատները պետք է տեղափոխել մեղվի ընտանիքների կողքին դրված տաքացման տոպրակների մեջտեղը և նրա բոլոր կողմերից լցնել 3—6 սմ. հաստություն ունեցող դարձան, բաց թողնելով միայն տաքացման աղարատի լերանը, որտեղից պետք է լցվի

տաք ջուր: Ապարատի ներքին անցքի ռետինե խողովակի ծայրը պետք է դուրս հանել փեթակի կողքի անցքից դեպի դուրս և նրա ծայրին ամրացնել արդելակ:

Ամեն երեկո այդ ապարատների մեջ պետք է լցնել տաք ջուր ($80—100^{\circ}$), որն այդ ապարատների մեջ տաք վիճակում կմնա մինչև հաջորդ օրը (որովհետև դարմանը լինելով վատ հաղորդիչ իր մեջ է պահում ջերմությունը և աստիճանաբար տալիս ընտանիքին՝ պահպանելով նրա $34—35^{\circ}$ նորմալ ջերմությունը): Հաջորդ օրը առավոտյան ռետինե խողովակի արդելակը պետք է բաց անել, որպեսզի սառած ջուրը թափվի ու երեկոյան միևնույն ռետինե խողովակներից լցնում ենք տաք ջուրը (առանց փեթակները բացելու): Համաձայն հաղորդակից անոթների օրենքին: Հետո արդելակը փակել և այդպես պետք է վարվել սխառեմատիկ կերպով ամեն օր մինչև վերջնականապես եղանակները կտաքանան: Օրինակ, դաշտային շրջաններում տաքացման շրջանը տևում է մինչև հունիսի 1-ը, կիսալեռնային շրջաններում՝ տեղում է մինչև հունիսի 15—20-ը, իսկ լեռնային շրջաններում՝ մինչև հունիսի 1—10-ը. ի հարկե այս թվերը պետք է հարմարեցնել տեղի պայմաններին:

Թիթեղից պատրաստած տաքացման ապարատներ չլինելու դեպքում, կարելի է այդ նպատակի համար



Նկ. № 3
Տախտանի քիթեղյա ապարան.

օգտապետութեւն զանազան մեծութեան սովորական շէնքեր :
Շէնքը նախօրոք լցնուած են ջրով , բերանը ծածկուած են
ուետինե խցանով և դնում ջրով լցրած կաթսայի մեջ
ու տաքացնում մինչև եռալը . շէնքը հանում կաթսա-
յից ու միանույն ձևով տեղավորում փեթակի ներսից
ընտանիքների կողքերում եղած տաքացման տոպրակ-
ների մեջտեղը և ծածկում դարմանով : Հաջորդ
երեկոյան հովացած ջուրը շշով պետք է հանել փե-
թակներից և տեղը դնել եռացրած ջրով լցված մի
ուրիշ շէնք : Փեթակները քիչ բաց անելու և ընտա-
նիքներից քիչ ջերմութեան կորցնելու համար այդ
աշխատանքը պետք է կատարել միանգամից :

Արհեստական տաքացման շնորհիվ մեղուները
կսկսեն ծավալվել , մայրը կսկսի առատ և խնամեսիվ
ձվել բոլոր այն շրջանակների վրա , որոնք պատած են
մեղուներով : Կարճ ժամանակից հետո , երբ մեղվի
ընտանիքներն ուժեղանալով կհասնեն որոշ ուժի , այն
է 8 Դադան-Բլատի կամ 8—10 Լանդստրոտի շրջա-
նակ պատող մեղվի և ունեն 6—7 Դադան-Բլատի
կամ 7—8 Լանդստրոտի շրջանակ որդի ու ձու , ան-
հրաժեշտ է կիրառել Լերրորդ միջոցառումը :

Երրորդ միջոցառման էութեանը կայանում է նը-
րանում , որ մեղվի ընտանիքներում եղած խնամող մե-
ղուներին անհրաժեշտ է ապահովել որդեք ու ձվեր
խնամելու լրիվ աշխատանքով , այսինքն վերացնել

խնամող մեղուներին և մոր դրած ձվերին միջև առաջացած անհամաչափությունը, օրինակ, առաջին հայացքից մեզ կարող է թվալ, որ եթե մեղվի ընտանիքների համար ստեղծվեն բոլոր բարենպաստ պայմանները, ապա նրանք կարող են անվերջ աճել ու բազմանալ, սակայն երբ մենք դործնականում և մոտիկից ծանոթանում ենք մեղվի ընտանիքի բիոլոգիային, տեսնում ենք, որ ինչքան էլ ընտանիքում լինի առատ կեր, ձվառատ մայր, մեծ քանակությամբ խնամող մեղուներ և դրանց բազմացման համար ստեղծվի նորմալ խնամք ու բարենպաստ պայմաններ, այնուամենայնիվ մեղվի ընտանիքների բազմացման շրջանն անցնելուց հետո մոր դրած ձվերի ու ընտանիքում եղած խնամող մեղուների միջև առաջ կգա քանակական անհամաչափություն: Այդ երևույթը պետք է հասկանալ այսպես, օրինակ, եթե սկզբնական շրջանում (գարնանը) մեղվի ընտանիքներում կա մեկական կիլոգրամ մեղու (մոտ 10000 հատ), դրանցից մոտավորապես 50%-ը կազմում են խնամող մեղուներ, որոնք միաժամանակ կարող են կերակրել 10000—18000 որդու ձու (այդքան բաց որդու ձու, ինչպես վերևում ստացինք, մեղվի նորմալ ընտանիքներում լինում են մեկ մոր առկայությամբ դեպքում:

Մեղվի ընտանիքների աստիճանաբար աճման և բազմացման գույքը թաց ավելանում է նաև նրանց

խնամող մեղուների քանակը: Ընդունենք, որ ընտանիքներում խնամող մեղուների քանակն ավելանալով 5000-ից հասել է 10000-ի, բայց որովհետև մայր մեղուներն ընտանիքների ինտենսիվ բազմացման շրջանում իրենց օրական ձվարկության միջին քանակը կարող են հասցնել 1500-ից մինչև 2000-ի, այսինքն ընտանիքներում միաժամանակ բաց որդի ու ձվի քանակը կարող է հասնել 14000—18000-ի, ուստի այդ որդերին ու ձվերին խնամելու համար անհրաժեշտ է 4000—5000 խնամող մեղու, ուրեմն ընտանիքներում եղած 10000 խնամող մեղվից 5000—6000 խնամող մեղու կմնան «սնդործ», կամ թե չէ բոլոր 10000 խնամող մեղուներն էլ կդբաղվեն որդի ու ձվեր խնամելու աշխատանքով, սակայն ոչ լրիվ բեռնվածությամբ: Այսպիսով կգա մի մոմենտ, երբ մեղվի ընտանիքներում մեղվի հարաբերական աճը կսկսի չափից ավելի դանդաղել. որպեսզի մենք հնարավորություն ունենանք խնամող մեղուներին լրիվ չափով օգտագործել, որդի ու ձվեր խնամելու գործում, դրա համար անհրաժեշտ է ուժեղացած, որոշ ուժի հասած ընտանիքներում օգտագործել օժանդակ մայրեր, որոնք մեզ հնարավորություն կտան խնամող մեղուներին ապահովել որդերով ու ձվերով և էլ ավելի արագացնել ընտանիքների տնտեսական բազմացման տեմպը:

Այնքան, որքան մեր աշխատանքի հաջողությունը կախված է նաև օժանդակ մայրերի ճիշտ օգտագործումից, անհրաժեշտ է այդ աշխատանքը կատարել ամենայն ճշտությամբ և մանրամասնությամբ: Այդ կապակցությամբ մենք այստեղ ամենայն մանրամասնությամբ նկարագրում ենք օժանդակ մայրերի օգտագործման եղանակներն առանձին-առանձին: Օժանդակ մայրերը կարելի է օգտագործել երկու եղանակով:

1. ՕժԱՆԴԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԿԻՍՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Այս եղանակը պետք է օգտագործել այն տնտեսություններում, որտեղ կան բեղմնավորված պահեստի մայրեր:

Կիսման եղանակի տեխնիկան. — Երբ մեղվի ընտանիքները կհասնեն որոշ ուժի, այն է 8 Դադան-Բլատի կամ 9—10 Լանդստրոտի շրջանակ խիտ առ խիտ պատող մեղվի 6—7 Դադան-Բլատի կամ 7—8 Լանդստրոտի շրջանակ որդե ու ձվի, վերցնել նախօրոք պատրաստված միլենույն գույնի ու սխտեմի 8,5 միլիմետրանոց բաժանարարներով մի դատարկ փեթակ ու դնել կիսվող փեթակի կողքը. կիսվող փեթակը պետք է շարժել կամ դեպի աջ կամ դեպի ձախ

(նայած տեղի հարմարությանը), այնքան, որքան իր նախկին տեղի կեսն է կազմում, դատարկ փեթակը մոտեցնել և կպցնել նրան, դրանից հետո բաց անել կիսվող ընտանիքը, հետո նրա ունեցած մեղուները, կնքված ու բաց որդերը, այլև պաշարը բաժանել երկու համասար մասի, մի մասը թողնել տեղում, իսկ մյուս մասը դնել կողքին դրած դատարկ փեթակի մեջ: Չվերսով շրջանակները բաժանելիս մայր չունեցող մասին պետք է մեկ շրջանակ ավելի տալ, որ պեսզի նրա բազմացման ընթացքն իր մյուս կեսի համեմատությամբ չդանդաղի, որովհետև այդ ընտանիքի նոր մորն ընդունելը և ձվելը կտևի 1—2 օր:

Հին մայրը պետք է տալ նոր փեթակում կաղմակերպված ընտանիքին, իսկ հին փեթակում մնացած ընտանիքին անմիջապես նուկլեոլաներից պետք է տալ բեղմնավորված մայր:

Մայր պետք է տալ վանդակով. մայրը վանդակի մեջ դնելիս անհրաժեշտ է նրա հետ դնել իր նուկլեոլանից մի քանի մեղու, որպեսզի վանդակում նրան խնամեն: Վանդակի ցածի կողմից պետք է կպցնել մոմաթերթի բարակ շերտ, որպեսզի մեղուներն այդ մոմի բարակ շերտը ծակելով մորը դուրս հանեն:

Մեղվի ընտանիքի բաժանումը կատարելուց հետո այդ երկու ընտանիքների բները պետք է դասավորել փեթակների կենտրոններում և նրանց երկու կող-

քերից դնել մեկական հատ չնչ կամ մոմաթերթ, ապա
դրանց կողքից էլ դնել միջնատախտակներ (և) տաքաց-
ման տոպրակներ, որոնց մեջ պետք է տեղավորել
տաքացման ապարատներ կամ շշեր և ամեն երեկո
տալ հռացրած ջրով տաքացումներ: Այդ ընտանիքնե-
րի բները դասավորելուց հետո պետք է վերևից ծած-
կել (և) փեթակների կափարիչները փակել:

Վերևում նշված բոլոր աշխատանքները պետք է
կատարել օրվա ամենատաք ու մեղուների աշխատան-
քի ամենաինտենսիվ ժամին:

Այդ աշխատանքները կատարելուց հետո, պետք է
կանգնել այդ ընտանիքներից մի քիչ հեռու և հետևել,
թե դաշտից վերադարձող աշխատավոր մեղուները
հավասարապես բաժանվում են այդ երկու ընտանիք-
ների վրա թե ոչ. եթե նկատվում է, որ մի ընտանի-
քում ավելի շատ աշխատավոր մեղուներ են մտնում,
քան թե մյուսը, այդ դեպքում այն ընտանիքը, որ-
տեղ դաշտից վերադարձող մեղուներից ավելի շատ
են մտնում, պետք է մի քիչ կենտրոնից հառացնել,
խսկ մյուս ընտանիքը, ընդհակառակը, մոտեցնել
նրան. այդպես պետք է կատարել այնքան, մինչև որ
դաշտից վերադարձող մեղուները հավասարապես բա-
ժանվեն այդ երկու ընտանիքների վրա:

Այսպիսով մի ընտանիքից ստացվում է երկու
հավասար ուժի ընտանիք, միայն այն տարբերու-

թյամբ, որ մի ընտանիքի մայրը նորմալ ձվում է
ընտանիքում, իսկ մյուս ընտանիքի մայրը դեռ չի
ձվում, նա բանտարկված է վանդակում:

Այստեղ պետք է լուրջ ուշադրություն դարձնել,
որ մեղուները մայրերին անկորուստ ընդունեն, որով-
հետև նոր մայրերի ընդունելության հարցը երբեմն
առիթ է տալիս խոշոր բարդությունների. կապտաճեն
ընտանիքներ, որոնք անմիջապես նույն օրում առանց
դժվարությունների նոր մորը կընդունեն, այդպիսով
այդ ընտանիքի զարգացումն ու բազմացումը ոչ մի
օրով չի դանդաղի: Այդպիսի ընտանիքների կողքին
երբեմն կապտաճեն նաև այնպիսի ընտանիքներ, ո-
րոնք չափ դժվարությամբ կընդունեն նոր մորը,
մայրը վանդակով բանտարկված ընտանիքում մեղու-
ները կդառնան բուսացու. իհարկե այսպիսի երևույթ-
ները չափ հազվադեպ են, այնուամենայնիվ այդպիսի
դեպք պատահելիս անհրաժեշտ է այդ ընտանիքից
ամբողջությամբ հանել բոլոր որդերն ու ձվերը, պա-
շարը, իսկ մորը վանդակով կախել դատարկ փեթա-
կում երկու միջնատախտակների մեջտեղից. մեղու-
ները կհավաքվեն ու այդ վանդակի վրա կկազմեն
խրենց կծիկը: Մեղուներն այդ վիճակում պետք է
թողնել այնքան ժամանակ, մինչև որ կսկսեն դալադ
գործել. այդ կնշանակի, որ մեղուները վանդակի
տակի մոմը ծակել և մորը դուրս են հանել. ուստի

անհրաժեշտ է այդ ընտանիքին վերադարձնել որդւոյն մեղուներով շրջանակներ:

Այսպիսի անախորժ երևույթներէց խուսափելու համար անհրաժեշտ է ընտանիքներէ բաժանում կատարել այնպիսի ժամանակ, երբ կա օժանդակ բերք, բացի այդ, բաժանման աշխատանքները պետք է սկսել օրվա ամենատաք և աշխատավոր մեղուների ամենաինտենսիվ աշխատանքի ժամին, երբ մեղուների մեծ մասը գտնւում է դաշտում, որպեսզի մինչև երեկոյան աշխատավոր մեղուներն իրենց տեղը որոշեն և վարժվեն իրենց նոր տեղին:

Հաջորդ օրվանից այդ բաժանված ընտանիքները պետք է աստիճանաբար իրարից հեռացնել, որպեսզի մի ընտանիքի մեղուներ մյուս ընտանիքը չմտնի:

20—25 օր հետո այդ բաժանված ընտանիքները նորից կուժեղանան և կհասնեն նախկին ուժին, որից հետո նորից նույն ձևով պետք է այդ ընտանիքները կիսել և տալ նրանց օժանդակ բեղմնավորված մայր: Վերևում նշված ձևով օժանդակ մայրեր օգտագործելու համար ընտանիքներէ կիսում կարելի է կատարել գլխավոր մեղրարերքից 25—30 օր առաջ, որից հետո պետք է թողնել, որ մեղուների բազմացումը կատարվի ընտանիքներէ ներսում:

Այս եղանակի օգտագործման միջոցով մենք մեր փորձնական մեղվանոցում կարողացանք ամեն մի

փորձարկատանիքում օգտագործել միջին հաշվով 6—10 օժանդակ մայր, որոնց արդյունքն եղավ այն, որ կոնսրոլ փեթակներում 0,5 օժանդակ մայրերի (50% աճի) առկայության դեպքում հիմնական ընտանիքում նոր ծնվող մեղուների օրվա աճը հասնում էր մաքսիմում 2500 հատի, այս այս եղանակով օժանդակ մայրերի օգտագործման հետևանքով նոր ծնվող մեղուների օրվա աճը հասավ 13330 հատի, որը հավասար է 1,3 կգ մեղվի, որով կարելի է կազմակերպել մեկ նորմալ ընտանիք:

2. Օժանդակ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍՆԱՏՄԱՆ (ԱՏՎՈԴԿԱՆԵՐԻ) ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը պետք է օգտագործել այն տնտեսություններում, որոնք չունեն պահեստի բեղմնավորված մայրեր: Այդպիսի տնտեսությունները պետք է առաջին տարին կիրառեն օժանդակ մայրերի օգտագործման ատվողականների եղանակը, որը նույնպես մեղվի ընտանիքների արտադրողականությունը կբարձրացնի 4—5 անգամ:

Սխառմատիկ կերպով ամեն օր մեղվի ընտանիքներին արհեստական տաքացումներ տալուց 20—25 օր հետո, երբ ընտանիքներն արդեն ունեն 8 Դադան-Բըլատի կամ 9—10 Լանդստրոտի շրջանակ պատող մե-

դու և 6—7 Դադան—Բլատի կամ 7—8 Լանգստրոտի
շրջանակ որդի ու ձու, ապա այդպիսի ընտանիքներից
անհրաժեշտ է մասնատել 3 շրջանակ պատած մեղու-
ներով (այդ շրջանակներից 2—ը պետք է լինեն որդի
ու ձվերով, իսկ մեկը՝ մեղրով և ծաղկավուշով) և
դրանցով կազմակերպել մի նոր փոքրիկ ընտանիք
ատվողիս:

Այդպիսի փոքր ընտանիքների համար մի առան-
ձին փեթակ չդրադեցնելու համար անհրաժեշտ է մի
փեթակը մեջտեղից բարակ դիկտե միջնապատով բա-
ժանել երկու հավասար մասի և ամեն մի մասում տե-
ղավորել մի ատվողիս. այդպիսով մի կողմից ժամա-
նակավորապես կտնտեսվի մի փեթակ, մյուս կողմից՝
մի ընտանիքի արտադրած ջերմությունը կօգտագործ-
վի մյուս ընտանիքին տաքացնելու համար:

Մասնատումը նույնպես պետք է կազմակերպել
օրվա ամենատաք և մեղուների ամենաեռուն աշխա-
տանքի ժամերին, որպեսզի աշխատավոր մեղուների
մեծ մասը լինի դաշտում՝ աշխատանքի, իսկ ատվողի-
կաների համար վերցրած մեղուներով խոշոր տոկոսը
լինեն խնամող մեղուներ:

Այդ անհրաժեշտ է նրա համար, որ դաշտ դնա-
ցող աշխատավոր մեղուներն ատվողիկաների հետ մի-
ասին չվերցնենք, որովհետև վերցնելու դեպքում նը-
րանք նորից Կվերադառնան իրենց նախկին տեղը, այ-

սխիւքն իրենց մայր փեթակը, իսկ նոք կազմակերպ-
ված ատվողկան հմնա շատ թույլ, որի պատճառով
ատվողկայում եղած որդ ու ձկերի մի մասը կարող է
սառչել և փչանալ:

Այդպիսի երևույթները կանխելու համար անհրա-
ժեշտ է ատվողկաները կազմակերպելուց հետո նույն
երեկոյան ստուգել նոր կազմակերպված ընտանիքնե-
րը, և եթե նկատուեն չափից ավելի թուլացած ընտա-
նիքներ, ապա նրանց մայր ընտանիքներից պետք է
նորից վերցնել թարմ խնամող մեղուներ և մեղուները
թափ տալ նոր կազմակերպված ընտանիքի մեջ:

Ատվողկաների կազմակերպման ժամանակ պետք
է շատ զգուշ լինել, որ չլինի թե պատահամբ տվյալ
ընտանիքի մայրն անզգուշությամբ գնա ատվողկայի
մեջ և այդպիսով դատապարտվի անդործության, իսկ
հիմնական ընտանիքն էլ մայր չունենալու պատճառով
կորցնի իր բաղմացման տեմպը, որով և կընկնի նրա
արտադրողականութունը:

Մի փեթակում երկու ատվողկա տեղավորելուց
հետո յուրաքանչյուր ընտանիքի դեպի դուրս նայող
կողմից պետք է դնել միջնատախտակներ ու ապա
տաքացման ապարատներն իրենց սլարկերով: Ատվող-
կաների կազմակերպման օրից սկսած ամեն երեկո
անհրաժեշտ է դնել եռացրած ջրով տաքացումներ:

Ատվողկաների կազմակերպումից 2 օր հետո, երբ

նոր կազմակերպված ընտանիքներն արդեն զգացել են
իրենց որբությունը և իրենց համար սխառաստել են
մայրապատուկների հիմքեր, դրանց անմիջապես պետք
է տալ հասունացած մայրապատուկներ: Եթե ատվող-
կաներին հասունացած մայրապատուկներ տրվեն ավելի
վաղ, քան այդ ընտանիքների որբությունը զգալը, այդ
դեպքում մեղուներն այդ հասունացած մայրապատուկ-
ներին կոչնչացնեն: Եթե մեղվանոցում կան չբեղմնա-
վորված մայրեր, ապա այդ մայրերը կարելի է տալ
նոր կազմակերպված ընտանիքներին, նրանց կազմա-
կերպման մոմենտին, քանի դեռ նրանք չեն զգացել
իրենց որբությունը:

Ատվողկաները կազմակերպելուց մի քանի օր հե-
տո, երբ հիմնական ընտանիքները նորից կուժեղա-
նան և կհասնեն նախկին ուժին, այդպիսի ընտանիք-
ներից նորից պետք է կազմակերպել ատվողկաներ:
Նարող է լինել այնպիսի դեպք, երբ ընտանիքն այն-
քան արագ կերպով կբազմանա ու կուժեղանա, որ
նրանից կարելի կլինի միաժամանակ կազմակերպել 2
ատվողկա: Ատվողկաների կազմակերպումը պետք է
վերջացնել գլխավոր մեղրաբերքից մեկ ամիս առաջ,
որից հետո ընտանիքները պետք է նախապատրաստել
գլխավոր մեղրաբերքը մաքսիմալ չափով օգտագոր-
ծելու համար:

Ատվողկաների կազմակերպման ընթացքում կա-

լող են լինել այնպիսի դեպքեր, երբ նոր կազմա-
կերպված ատվողականների մայրերը չեն բեղմնավորվի
կամ անբարենպաստ եղանակներից և մի շարք ուրիշ
պատճառներից կոչնչանան, որի հետևանքով կդա-
դաղի այդպիսի ընտանիքների դարդացման ու բազ-
մացման ընթացքը: Նման դեպքերում երկար չպետք է
դբաղվել այդ ընտանիքներով, այլ դրանց անմիջապես
սկսած է միացնել իրենց հարևան ատվողականների հետ,
որոնք ունեն բեղմնավորված կամ չբեղմնավորված
մայրեր:

Ահա այն երկու հիմնական եղանակները, որոնց
միջոցով հնարավոր է մեղվի ընտանիքներում օգտա-
դործել օժանդակ մայրեր, երբեմն հնարավոր է նաև
միևնույն տնտեսուհիյուններում օգտադործել այս եր-
կու եղանակները միասին:

Յ. ՕՓԱՆԴԱԿ ՄԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽԱՌԸ (ԱՏՎՈՂԿԱՆԵՐԻ ՇԵՏՈ ԿԻՍՄԱՆ) ԵՂԱՆԱԿԸ

Այն տնտեսուհիյունները, որոնք պահեստի բեղմ-
նավորված մայրեր չունեն, վաղ դարնանը կարող են
սկզբից կազմակերպել ատվողականներ, և երբ նրանց
մայրերը բեղմնավորվեն, այդ դեպքում հիմնական ըն-
տանիքները կարելի է կիսել և ատվողականների բեղմնա-
վորված մայրերը վերցնել և տալ կիսման եղանակով

կազմակերպված նոր ընտանիքներին, իսկ ատվոդկաներին նորից տալ հասունացած մայրապտուկներ: Այս ձևով ավելի լավ էֆեկտ կստացվի, քան միմիայն ատվոդկաների եղանակով օժանդակ մայրերի օգտագործումը:

Ատվոդկաներին և նուկլեոսներին ժամանակին հասունացած մայրապտուկներով ապահովելու համար անհրաժեշտ է օժանդակ ընտանիքները (թե կիսման և թե ատվոդկաների եղանակով) կազմակերպելուց 9—10 օր առաջ դրադվել մայրաբուծությամբ:

Զորրորդ. — Այս միջոցառումը վերաբերում է միմիայն քոչվոր մեղվաբուծական տնտեսություններին — դա տարբեր զոնաների օգտագործումն է մեղվի ընտանիքների արտադրողականության բարձրացման համար:

Մեր մեղվաբուծական տնտեսություններից շատերն այդ միջոցառումը ճշտությամբ չեն օգտագործում, որովհետև մինչև օրս հաշվի չի առնված միշտ կարևոր հանգամանք, այն է՝ բոլոր միջոցառումները պետք է նպաստեն սկզբնական շրջանում մեղվի ընտանիքների ինտենսիվ բազմացմանը, որից հետո միայն այդ բազմացված մեղուներով պետք է օգտագործել դլիավոր մեղրաբերքը:

Դրա համար պետք է մեղուները դաշտային շրջաններում պահել այնքան, ժամանակ, քանի դեռ ըն-

տանիքներում որդի սահմանափակում և մեղրի կու-
տակում չի նկատվել. եթե մեղվի ընտանիքները
դաշտային շրջաններում օգտագործեցին գլխավոր
մեղրաբերքը, դա՛ կնշանակի, որ լեռնային շրջաննե-
րում այդ ընտանիքները գլխավոր մեղրաբերքի ժա-
մանակ կդրադվեն ոչ թե մեղր կուտակելով, այլ
բազմանալով: Այդ երևույթը պետք է բացատրել
այսպես, երբ դաշտային շրջաններում, սկսած մոտա-
վորապես մայիսի 25-ից մինչև հունիսի 20-ը, լինում
է մեղրաբերք, այդ ժամանակաշրջանում մեղվի ըն-
տանիքները դեռ իրենց զարգացման լրիվ աստիճանին
չհասած դրադվում են մեղր կուտակելով և սահմա-
նափակում են մայր մեղվի ձվարկությունը, այսպի-
սով մեղվի ընտանիքում աստիճանաբար դանդաղում է
աճեցողությունը ու բազմացումը, իսկ եղած մեղու-
ների մեծ մասն էլ այդ բերքի ընթացքում մաշվում,
ծերանում և մեռնում են: Այդ ընտանիքների մեղրը
քամելուց հետո, երբ նրանց տեղափոխում են լեռնա-
յին շրջան, որտեղ նորից սկսվում է նրանց բազմա-
ցումը, 21 օրից հետո միայն այդ ընտանիքներում
սկսվում է մեղուների աճը:

Երբ այդ նոր ծնված մեղուները 15 օրից հետո
դառնում են աշխատավոր մեղուներ, լեռնային շր-
ջաններում գլխավոր մեղրաբերքի կեսն արդեն անցած
է լինում: Այսպիսով կատարյալից այն, որ երկու դեպ-

թյամբ մեղր և ծաղկեփռի, որ բավականացնի նրանց
մինչև կիսալեռնային կամ լեռնային շրջաններում
օժանդակ մեղրարերքի սկսվելը. հակառակ դեպքում,
պակաս կերապաշար ունենալու պատճառով ըն-
տանիքների աճեցողությունը կդանդաղի:

Ահա այն բոլոր միջոցառումները, որոնք մանրա-
կըրկիտ և ճշտությամբ կատարելու դեպքում կբարձ-
րանա մեղվի ընտանիքների ընդհանուր արտադրողա-
կանությունը:

Այս մեթոդը կիրառելու դեպքում անհրաժեշտ է,
որ դարնանը, մեղվի ընտանիքները լինեն նորմալ ու-
ժի, ունենան 1,2—1,8 կգ. մեղու, և 12—15 կգ. կե-
րապաշար, հայած մեղվանոցի տեղին՝ դաշտային
շրջանում է, թե լեռնային, որովհետև ինչքան մեղվի
ընտանիքը դարնանը ուժեղ լինի, այնքան նրա ար-
տադրողականությունը բարձր կլինի, օրինակ, 1939
թվականին № 1 ընտանիքը, որը դարնանն ուներ 1,5
կիլոգրամ մեղու, նրանից ստացվեց 367,8 կգ. մեղր
և 11,64 կգ. մոմ: № 2 ընտանիքը, որն ուներ
1,4 կգ. մեղու, նրանից ստացվեց 248,4 կգ. մեղր,
7,5 կգ. մոմ իսկ № 3 ընտանիքը որն ուներ 1,2 կգ.
մեղու, նրանից ստացվեց 203,3 կգ. մեղր, 6,4 կգ.
մոմ և այլն:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մեղվի ընտա-
նիքներում դարնանը եղած 100—300 գրամ մեղվի

քումն էլ այդ մեղվի ընտանիքներն իրենց լրիվ զար-
գացմանը հասած օգտագործում են գլխավոր մեղրա-
բերքը:

Այս երևույթից խուսափելու և մեր առաջարկած
մեթոդն իր լիակատար նպատակին ծառայեցնելու հա-
մար մեղվաբուծական տնտեսությունները պետք է
ամբողջովին դեկավարվեն հետևյալ սկզբունքով, այն
է՝ գլխավոր մեղրաբերքը պետք է օգտագործել միմի-
այն մեղվի ընտանիքների մաքսիմալ բազմացումից
հետո: Ինչպես պետք է հասկանալ այդ երևույթը.
օրինակ, եթե դաշտային շրջաններում մեղվապահնե-
րը կնկատեն մեղվի ընտանիքներում որդերի սահմա-
նափակման նշաններ՝ հօգուտ մեղրի կուտակման, ա-
պա պետք է անմիջապես մեղվի ընտանիքները տեղա-
փոխեն դեպի կիսալեռնային շրջանները, հենց որ կի-
սալեռնային շրջաններում նորից նկատվի այդպիսի
երևույթ, մեղվի ընտանիքներն այդտեղից նույնպես
պետք է տեղափոխեն դեպի լեռնային շրջանները՝
իրենց վերջին կայանը, որտեղ որ մտադիր են օգտա-
գործել գլխավոր մեղրաբերքը: Այստեղ չպետք է ան-
տես առնել մի շատ կարևոր հանդամանք, այն է,
մեղվի ընտանիքներին կիսալեռնային կամ լեռնային
շրջանները տեղափոխելուց առաջ թողնել որ նրանք
իրենց բներում կուտակեն անհրաժեշտ քանակու-

տարբերությունը խոշոր նշանակություն ունի նրանց
արտադրողականության բարձրացման տեսակետից:

Այնքան, որքան մեր մեթոդի կիրառումը խոշոր
չափով կապ ունի օժանդակ մայրերի մաքսիմալ օգ-
տագործման հետ, անհրաժեշտ ենք համարում մի քիչ
սովելի մանրամասն կանգ առնել վաղ դարնան ար-
հեստական մաշրահանման (և) բուսահանման աշխա-
տանքների կազմակերպման վրա:

Մեղվարուծական տնտեսություններում որակի
համար պայքար պետք է տարվի ոչ միայն մեղվի ըն-
տանիքների խնամքի ու կերակրման պայմանների բա-
րելավմամբ, այլև նրանց տնտեսապես օգտակար ժա-
ռանգական հատկանիշների բարելավմամբ, մեղուկների
արտադրողականությունը բարձրացնելու ուղղու-
թյամբ:

Մեղվարուծության մեջ մեղվի մայրը հանդիսա-
նում է մեղվի ընտանիքի առանցքը, ընտանիքի զար-
գացման ամբողջ ընթացքն ու նրա արտադրողակա-
նության չափը մեծապես կապված է մոր պտղառա-
տությունից (և) ձվարկության քանակից:

Վերոհիշյալն ինքնին ցույց է տալիս, թե ինչ խո-
շոր նշանակություն ունի մայրերի որակը, այդ իսկ
պատճառով մայրեր պետք է բուծել մեղվանոցի այն-
պիսի ընտանիքներից, որոնք ունեն բարձր արտադրո-
ղականություն:

Արհեստական մայրահանումը հիմնավորվում է մեղմաբուժությանն արդեն վաղուց հայտնի այն երեւիքով, որ երբ մեղուներն այս կամ այն պատճառով կորցնում են իրենց մորն, իրենց ընտանիքում եղած փոքրահասակ աշխատավոր մեղվի որդերից, նրանց առատ կերակրելով և բջիջների վերափոխելում միջոցով, պատրաստում են մայրեր: Այստեղից հետևում է, որ արհեստական մայրահանում կարելի է կատարել այն դեպքում, եթե ունենք՝

1. Մայր ընտանիք (տոհմական), որից պետք է ստանալ որդեր ու ձվեր՝ մայրացուներ խնամելու համար:

2. Խնամող ընտանիք, որը մեր տված տոհմական որդերին ու ձվերին խնամի որպէս մայրացուներ:

Տոհմական ընտանիքները պետք է ընտրել մեղվանոցի այնպիսի ընտանիքներից, որոնք նույնաման խնամքի, կերակրման և կլիմայական պայմաններում աչքի են ընկնում իրենց բարձր արտադրողականութեամբ: Այս ընտրած ընտանիքները պետք է բաժանել հիմնականում երկու խմբի, առաջինը տոհմական մայր ընտանիքներ, որոնցից պետք է ստանալ որդի ու ձվեր տոհմական մայրեր ստանալու համար, իսկ երկրորդ խումբը՝ տոհմական հայր արտադրող ընտանիքներ, որոնցում պետք է բուծել տոհմական բուներ:

Բացի տոհմական ընտանիքներից, անհրաժեշտ է նաև ունենալ խնամող ընտանիքներ, որոնք պետք է լինեն ուժեղ 1,5—2 կգ. մեղմով ու կերի առատ պաշարով: Խնամող ընտանիքները պետք է լինեն բոլոր տեսակի հիվանդություններից դերժ:

Տոհմական մայր ընտանիքներից միահասակ որդեր ու ձվեր ստանալու համար անհրաժեշտ է, որ մայրը 1—2 օրով դրվի մեկուսարան, որտեղ նա համատարած կերպով կձվի այդ նպատակի համար դրած չեչի մոտավորապես բոլոր բջիջներում:

Բռնաբռնությունների հատկացված տոհմական ընտանիքների մեջտեղում պետք է դնել բռնաչեչեր, և այդ ընտանիքներին սխտեմատիկաբար կերակրել դրդուիչ կերով, որպեսզի մայրն այդ բռնաբջիջներում ձվի չբեղմնավորված ձվեր: Մեղմանոցի մյուս ընտանիքներում պետք է պայքար տանել բռների դեմ, որպեսզի հնարավորություն չափով մայրերի զուգավորումը կատարվի տոհմական բռների հետ:

Արհեստական մայրահանման եղանակները բաժանվում են երկու խմբի.

ա) երբ որդերը բնական բջիջներից փոխադրում ենք արհեստական բջիջների մեջ ու որպես մայրացուններ տալիս ենք խնամող ընտանիքներին.

բ) երբ որդերը տալիս ենք իրենց խնամող ընտա-

նիքներին որպէս մայրացուներ՝ իրենց բնական բժշկ-
ներով:

Այս երկու եղանակներն էլ ունեն իրենց դրական
և բացասական կողմերը: Օրինակ, որդերի փոխա-
դրման եղանակի դրական կողմն այն է, որ խոշոր
մայրաբուծական տնտեսություններում այդ նպատա-
կի համար չեն ոչնչացնի մեծ քանակությամբ չեչեր,
որոնք մեղվաբուծական տնտեսությունների համար
չափ թանկ արժեն:

Այս եղանակի բացասական կողմն այն է, որ այս
եղանակով մայրահանում կատարելու համար անհրա-
ժեշտ է ունենալ հատուկ սարքավորում, տաքացրած
սենյակ, մասնագետ-մեղվաբույժ, որը տիրապետում
է մայրաբուծության տեխնիկային:

Երկրորդ եղանակի դրական կողմն այն է, որ չի
պահանջում հատուկ սարքավորում և մասնագետ-
մեղվաբույժ, իսկ բացասական կողմն այն է, որ մեծ
տնտեսություններում մայրահանման աշխատանքնե-
րի համար անհրաժեշտ է ունենալ մեծ քանակու-
թյամբ չեչ:

Մեր արտադրության մեջ այս երկու եղանակնե-
րից ամենից շատ օգտագործվում են երկրորդ եղա-
նակի այս կամ այն վարիանտը:

Մայրահանման Պեխաչեկի եղանակը

Այս եղանակը մեր պայմաններում տալիս է շատ

լամ արդյունք, որովհետեւ այս եղանակը չունի այն
բարդություններն ու նրբությունները, ինչպիսին են
Պատի, Պերեմիզոնովի եղանակները:

Երբ տոհմական ընտանիքի մայրը մեր դրած
չըջանակի վրա արդեն ձվել է, 2—3 օր հետո պետք է
վերցնել այդ չեչը, տանել աշխատանքի սենյակը,
դնել հարթ սեղանի վրա ու տաքացրած սուր դանա-
կով հեռացնել յուրաքանչյուր չորս շաբաթ բջիջներից
3 շաբաթը, իսկ հետո ատամի փոքր խողանակով ոչըն-
չացնել այդ հեռացրած երեք շաբաթում եղած որդերը
և ձվերը, իսկ մնացած բջիջների բերանները փայտե
փոքրիկ կաղապարով լայնացնել և այդ ձևով տալ
խնամող ընտանիքին:

Խնամող ընտանիքին մայրացուներ տալուց 2—3
ժամ առաջ պետք է այն որբացնել, այսինքն խնամող
ընտանիքի մայրը և նրանում եղած բոլոր բաց ձվերն
ու որդերը հեռացնել և ընտանիքում թողնել միմիայն
կնքված հարսնյակներ:

Խնամող ընտանիքը որբացնելու ժամանակ պետք
է շատ զգույշ լինել, որպեսզի փակ հարսնյակների
բջիջների արանքներում բաց ձվեր ու որդեր չմնան,
որովհետեւ բավական է, որ խնամող ընտանիքում մի
քանի հատ բաց որդ ու ձու մնան, որպեսզի մեր ամ-
բողջ աշխատանքն իզուր կորչի: Այդպիսի դեպքերից
խուսափելու համար հաճախ խորհուրդ է տրվում

խնամող ընտանիքներին որբացնելու ժամանակ նրան-
ցից հանել բոլոր տեսակի որդերն ու ձվերը (բաց
կամ փակ— դա միևնույն է) . այս դեպքում մեղվի
ընտանիքն իր որբությունն ավելի շուտ է զգում և
մեղուներն ավելի շատ են դրդավում, որի շնորհիվ
խնամում են մեծ քանակությամբ մայրացուներ:
2—3 օր հետո խնամող ընտանիքներին նորից պետք է
վերադարձնել իրենց կնքված որդերը, որպեսզի նը-
րանք չափից ավելի չթուլանան:

Մայրացուներով պատրաստված չեչը պետք է
դնել խնամող ընտանիքի բնի շրջանակների վրայից՝
մայրացու բջիջների բերանները դեպի ցած, իհարկե
այդ մայրացուներով չեչի տակից պետք է դնել նույն
շրջանակի մեծության 3—3,5 սմ. բարձրությամբ
մի այլ շրջանակ, որով մեղուներին հնարավորություն
կազմի կառուցել մայրապտուկներ ազատ տարածու-
թյան մեջ, առանց կպցնելու բնի շրջանակներին:

Խնամող ընտանիքին պատվաստում տալուց հետո
բնի կողքերից պետք է տալ արհեստական տաքացում-
ներ (տաք ջրով), վրայից պետք է դնել բարակ դիկ-
տի կտոր՝ շրջանակի մեծությամբ. որպեսզի այս բո-
լորը ճիշտագույն կախարիչի ծածկելուն, պետք է կա-
փարիչի և բնի արանքում դնել վերնահարկ, որի մեջ
կտեղադրվի պատվաստման չեչը և նրա վրայից
դնել տաքացման թաբձը: Խնամող ընտանիքին սխտե-

մատիկարար ամեն օր պետք է առատ կերակրել մինչև մայրապտուկների կնքելը:

Պատվաստումը տալուց 9—10 օր հետո պետք է խնամող ընտանիքներից հասունացած մայրապտուկները վերցնել և բաժանել նոր կաղմակերսված ատվոդկաներին և նուկլեոսներին:

Մայրահանման Ցանդերի եղանակը*)

Այս եղանակը մեզ մոտ, արտադրության մեջ նույնպես գտել է խոշոր ընդունելություն իր մատչելի և պարզ տեխնիկայի շնորհիվ:

Այս եղանակի էությունը կայանում է նրանում, որ տոհմական օրդերն իրենց բնական բջիջներով մեկ մեկ կտրատում և մոմով կպցնում են փայտից հատուկ պատրաստված կտորների վրա: Այս փայտի կտորները նախօրոք իրար կողք—կողքի ամրացված են շրջանակների երկարությամբ՝ ձողերի վրա: Պատվաստումները տալուց հետո այդ ձողերն իրենց փայտի կտորներով դնում են շրջանակների մեջ և տեղափոխում խնամող ընտանիքների բնի մեղրով լցված շրջանակների արանքում:

Մեղվի ընտանիքների արտադրողականության

*) Հայաստանում այս եղանակը մեզ անհայտ պատճառներով կոչվում է Շիշկինի անունով:

բարձրացման այս նոր մեթոդը, որը մշակված է Անասնապահական Փորձակայանում, կարելի է կիրառել մեղվարուծական բոլոր տնտեսություններում որոշ փոփոխություններով:

1. Եթե մինչև օրս մեղվապահի և օգնականի խնամքին հանձնվում էին նորմալ կարգով 60—80 մեղվի ընտանիք, ապա այս մեթոդի օգտագործման դեպքում պետք է հանձնել՝ ասվող կանների եղանակով բազմացվող մեղվախոցներից 40—50 ընտանիք, իսկ կիսաման եղանակով՝ 30—40 մեղվի ընտանիք, որպեսզի մեղվապահները կարողանան լրիվ չափով ապահովել նրանց ամբողջ խնամքը:

2. Մեղվի ընտանիքները պետք է պահել ուժեղ, այսինքն մեղուները դարձնանք պետք է պատեն 6—8 Գաղան—Բլատի, կամ 7—9 Լանգստրոտի միջշրջանակ (նայած զոնաներին), որը մոտավորապես հավասար է 1,3—1,8 կգ. մեղվի:

3. Գարնանը մեղվի ընտանիքները պետք է ապահովված լինեն լրիվ կերակրապաշարով՝ 9—14 կգ. (նայած զոնաներին):

4. Գարնանը օժանդակ մեղրարերքի բացակայության ժամանակ, երբ եղանակներն արդեն տաքացել են, մեղվի ընտանիքներին անհրաժեշտ է կերակրել չաքարաջրի կամ մեղրի փոքր բաժիններով (0,2—0,3

կիւլոգրամ) որպէս գրգռիչ կեր, որպէսզի ընտանիք-
ների աճման և բազմացման տեմպը չդանդաղի:

5. Մեղվի ընտանիքների կիսման եղանակով բազ-
մացումներն ապահովելու համար, եթե հասուկ մայ-
րաբուծական տնտեսություններ չկան, որոնցից կա-
րելի լիներ դնել բեղմնավորված մայրեր, ահաբա-
ժեշտ է դարնանն ունենալ հիմնական ընտանիքների
100%-ի չափով նուկլեոններ իրենց բեղմնավորված
մայրերով:

6. Վաղ դարնանից մեղվանոցներում պետք է
դրաղվել մայրաբուծությամբ և բոռաբուծությամբ,
հաջորդ կիսումներն օժանդակ մայրերով ապահովելու
համար:

7. Օժանդակ մայրերի օգտագործման նպատակով
ընտանիքների բաժանումը պետք է դադարեցնել՝
կիսման եղանակի օգտագործման դեպքում՝ գլխավոր
մեղրաբերքից 25—30 օր առաջ, իսկ ասվողկաների
եղանակի կիրառման դեպքում՝ 30—40 օր առաջ, որ-
պէսզի այդ կազմակերպված ընտանիքների մեղուները
լիակատար հնարավորություն ունենան ուժեղանալու,
բազմանալու իրենց ընտանիքի մեջ, գլխավոր մեղրա-
բերքը լրիվ օգտագործելու համար:

8. Գլխավոր մեղրաբերքից հետո օժանդակ ըն-
տանիքների մի մասից վերցնել մորը 2 չրջանակ մեղ-

վով և մեղրով ու դրանցով կադմակերպել հիմնական ընտանիքների 110%—ի չափով նուկլեոսներ հաջորդ տարին օժանդակ մայրերով ապահովելու համար, իսկ դրանց մեղուները միացնել հիմնական ընտանիքներին՝ վերջիններն էլ ավելի ուժեղացնելու համար, իսկ այդ ընտանիքների մեղրն ամբողջութամբ հանել որպես ապրանքային մեղր:

9. Այս մեթոդը կարելի է կիրառել բոլոր սխառմի փեթակներում (Դադան—Բլատի, Լանգստրոտի, Լիթակի և այլն) որոնց մեջ տեղավորվում են 12—ից ոչ պակաս շրջանակներ:

Այս մեթոդի կիրառման դեպքում ամեն մի հիմնական ընտանիքի համար տնտեսությունը պետք է ունենա հետևյալ սարքավորումները և նյութերը.

1. Դատարկ արկղներ 4—5 հատ կիսման եղանակի համար

» » 3—4 » ատվողկաների եղանակի համար

2. Մամաթերթ 5 կգ. կիսման եղանակի համար

» » 2 կգ. ատվողկաների եղանակի համար

3. Շրջանակներ 80 հատ կիսման եղանակի համար

» » 35 » ատվողկաների եղանակի համար

4. Շէիք Տ հատ կիսման եղանակի համար

» 4 » առավելակների եղանակի համար

Ահա այն բոլոր միջոցառումները, որոնց կիրա-
ւումով կբարձրանա մեզվի ընտանիքների առատազրու-
դականությունը:



А. КОТОГЯН

**Краткое руководство по
пчеловодству и повышению
его продуктивности**

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1943

Պատ. խմբագիր՝ Լ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՎՖ 02893. Պատվեր 545. Տիրաժ 2000
Տպագրական 1,6 մամ. Մեկ մամուլում
40000 նշան: Ստորագրված է
տպագրության 5/VIII—43

Հայպետհրատի տպարան, Երևան, 1943 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037346

ԳԻՆԸ 1 Ռ. 80 Կ.

234

A $\frac{1}{2855}$

17008.12